

ՀՆԶԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

ԵՒ

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՆ

(Յօդուած Երրորդ.)

Վերջին երկու տարւայ միջոցին հայկական տաճնապը եղաւ հայ հասարակութեան համար մի խառնակ մղձաւանջ: Աւրօպական պետութիւնների յաւիտենական խաղերը բարենորոգումներ ծրագիր կոչւած խեղկատակութիւններով նախ զայրացրնելով մեր հասարակութեանը, ի վերջոյ դառնութեամբ ողորդեցին նրա սիրտը: Արանք, որոնք ծանօթ էին տէրութիւնների արեւելեան քաղաքականութիւններին, հետեւել ու քննել էին դրանց ձգտումներն ու շահերը, որոնք, այդպիսով, անընդհատ կոչ էին կարդում. ընդհանուր հայութեան միայն յեղափոխութեան և լայնածաւալ ասպարտամբութեան մէջ փնտռել փրկութիւն և օժանդակել ու աջակցել ամեն կերպով ճշմարիտ յեղափոխական ջանքերին, մի կոչ, որը — դառն, կործանարար իրողութիւն — մնաց անլսելի, — նրանք նորանոր ապացոյցներ ու հաստատութիւններ ունեցան — աւաղ, ինչ սոսկալի գնով — հայ հասարակութեան թէ՛ եսասէր, թէ՛ թերահաւատ և թէ՛ չը հասկացող մասին հասկացնելու իրանց շարունակ արտայայտած կարծիքների ճշմարտութիւնը: Բայց միւսները, որոնք յոյսեր էին տալով, որ հայկական խնդիրը կարճ ժամանակամիջոցում կը ստանայ — մի կամ միւս եղանակով — եւրօպական տէրութիւնների միջամտութեամբ փոքր ի շատէ գոհացուցիչ լուծում և առանց յեղափոխական մեծ ջանքերի, — այդպիսիների վարթները, այդպիսիների ուշքի գալը և իրանց շուրջը հայեացք գցելը սարսափելի իրականութեան վրայ եղաւ ահաւոր ու եղբրական: Աորացած ու գիտակցութիւնը կորցրած վրայ հասած զարհուրելի հարուածների տակ, նրանց պաշարել էր ընդհանուր ահաբեկութիւն: Արանք չէին մտածում, այլ զառանցում էին. նրանք չէին զգում, այլ ցաւազար էին. նրանք չէին ըմբռնում, այլ զրգուում էին. երկիւղն, անիքնափստահութիւնը, շփոթութիւնը, վերջապէս վհատութիւնն ու յուսահատութիւնն իրանց ոսկրացած ճանկերով բռնում ու սեղմում էին այդպիսիների սրտերը, ուղեղները:

Դարձեալ մի քիչ աւելի առաջ այդ ուղիով — և տեղի կունենար, բարոյական անանկութիւնից յետոյ, բարոյական մահ նրանց մէջ: Աւ դա ըստ պառնում էր դառնալ մի-տեսակ վարակիչ ախտ, որ ձգտում էր տարածւել, թունաւորել ու վերջնական անկման մատնել հայ հասարակութեանը, հայ ժողովրդի աւելի ու աւելի մեծաթիւ մասը: Հայութեան դատի ամենածանր ձգնաժամը, եւր. տէրութիւնների բացարձակ հակառակութիւնն այդ դատի որ և է լուծման, մանաւանդ հայ իրականութեան պատմական պահանջների համաձայն, թիւրք կառավարութեան հետ միասին այդպիսի զօրաւոր ու անյաղթելի վեց հակառակորդների — քիչ էր մնում ասէինք թշնամիների — ըստ երեւոյթին զրեթէ յանկարծական երևան գալը — այդ բոլորն իրար հետ միախառնւած, իրանց մեծ ու մանր, ընդհանուր ու մասնակի բազմատեսակ երեւոյթներով ու պարագաներով, դերանացան հայ հասարակութեան, հայ ժողովրդի դէմ իբրեւ անյաղթելի ու անկործան խոչնդոտներ, հսկայական պատնէշներ, որոնք միանգամից, կարծես յաւիտենապէս, կտրում ու զատում էին հայութեան կեանքի ներկայ դժոխքը նրա յուսացած ապագայի դրախտից, հայ իրականութեան արհաւիրելի աշխարհը նրա երազած ապագայ աւետեաց աշխարհից: Աւ գլուխները կորցրածի պէս, ինչպէս մի մարդ, որի տունն ու տեղը յանկարծ այրւում են և մնում է զուրսն անտուն ու մերկ, չը կարողացած դեռ ժողովել իր մտքերը և պաղարիւն կերպով իրան հաշիւ տալ եղածի ու լինելիքի մասին — և գլուխը կորցրածի պէս, ասում ենք, հայերը սկսան իրանք իրանց և միմեանց յուզել հարցեր տալ — ի՞նչ եղաւ, ի՞նչ կը լինի, ի՞նչ վիճակ է, ի՞նչ պէտք է անենք, սոսկալի հարուած է սա, թէ՛ կորուստ և այլն: Ահաւոր ու եղբրական հոգեբանական րօպէ, լի ամենաճանր փորձութիւններով, մի ժողովրդի կեանքի մէջ, երբ նա կարող է յիշաւի մատնւել վերջնական ազգային կորստին աւելի շուտ հէնց այդ հոգեկան վիճակից, քան իր կրած սոսկալի հարուածներից: Այդպիսի րօպէներում է, որ մէկ ազգ պէտք է ինքնաբերաբար ցոյց տայ իր հոգեկան ոյժերը: Աւ եթէ նա անկարող եղաւ այդ ոյժերը ցոյց տալու, եթէ այդ ոյժերը բացակայում են

նրանում, այդ ժամանակ վիճն է, որը պատմութիւնը կը բանայ նրա ոտքի տակ: Այդպիսի քաղէներում է, որ մէկ ազգ ոչնչանում ու կորչում է և կամ թէ, ընդհակառակը, մնում կանգուն ու անընկճելի և հանդիսանում ընդունակ ունենալու ազգային ապագայ:

Աւրօպական ու Ասիական Արեւելքում միմեանց յաջորդող դէպքերի, որպէս նաեւ հայոց մշտքերի, զգացումների, տրամադրութիւնների այդ խառնաշփոթ ու պղտոր իրարանցման միջոցին մինչեւ այսօր, ահա երկու տարիից ի վեր, առաջացան բարոյական երեւոյթներ, որոնք ոչ միայն բնորոշ են, այլ և մեծամեծ ու դառն դասեր են ապագայի նկատմամբ: Հայ հասարակութեան այն մասերը, որոնք իրանք իրանց մկրտում են վարիչ, առաջնորդ, մտածող, գործիչ և այլ նոյնանման անուններով, տարօրինակ կերպով ցոյց տւին իրանց մշտքի, իրանց բարոյականի աղքատութիւնը, սնանկութիւնը, տղայութիւնն ու անպատրաստականութիւնը, ոմանք՝ ապականութիւնն ու աղտը, ոմանք՝ երկչոտութիւն, պառաւութիւն ու անշարժութիւն, ոմանք՝ եսամոլութիւն, անձնապաշտութիւն, որն իսկապէս փոխում ու դառնում էր անտարբերութիւն: Մէկը, սերտած փքուն, բանալ, սովորական ու իմաստակ դարձած Ֆրազօլօգիային ու ճոռումբանութեան էր ոյժ տալիս, բոլորովին անժամանակայարմար կերպով, բոլորովին անտեղի, որով մատնում էր իր զիտակցութեան ու բմբռման աղքատութիւնը պատմական աւրասփելի քաղէի մասին, քաղէ, որի պայմանն է լինել վաղը կամ մահագոյժ և կամ երկունքի աւետումն: Աւ այդ պառնչկոտ ու անբովանդակ Ֆրազաբանութիւնը որոշ կերպով ապացոյց էր դրա տէրերի տղայական ու դիւլէտանտային վայրի վերոյ վերաբերութեան դէպի այնպիսի մի գործ ու այնպիսի պատմական քաղէ, որից կախած է մէկ ամբողջ ազգի գոյութեան խնդիրն: Միւսներն օգտվելով ընդհանուր շփոթութիւնից ու իրարանցումից, նոյն դերը կատարեցին, ինչ որ գողերն են անում հրդեհած տան պէտին, ջանք թափեցին օգտուել պղտոր հանգամանքներից իրանց դաւաճանութիւնները, իրանց ստորութիւններն ու ոճիրները ծածկելու համար, շահագործել հասարակութեան վըհատութիւնը, նախանձաբորբոք՝ անձուռնի ամբաստանութիւններն ու զազրելի աղտեր թափելով այս կամ այն աչքի ընկնող անձնաւորութեան վրայ, զրգռել ու շողորթել անհատների ու հասարակութեան տղեղ բնազդներն՝ իրանց անխոստովանելի դիտումներին ծառայեցնելու նրանց, իրանց մերկացնող դատաւորների դէմ ամենաստոր դէնքեր ձեռք բերելու միտումով և իբր գառնազգեստ դայլեր իրանք՝ այդ հասարակութեան միա-

միտ մասին իրանց ձեռքին՝ գործիք, իրանց տենչացած փառքին՝ պատուանդան և իրանց ազգադաւ ու դաւաճանական գործերին՝ քօղ ու դիմակ, նեցուկ ու դրամատու դարձնել: Այլորդները, սրանք, յարմար ժամանակ գտան իրանց պառաւական ու ախմար հակադիմադրական քարոզներն ու իմաստակութիւններն՝ իբրեւ կաղ էշերի առաջ քշելու և աժան գնով ծախելու, թէ պէտք է թիւրքի հետ միշտ լինենք հաշտ, պէտք է սուլթանին զրգռել, պէտք է յեղափոխութիւն, և մի շարք նոյնանման խօսքեր: Աւ ամեն աղէտների առաջ դալը վերադրելով յեղափոխական շարժումներին, այդպէս ասողները խօսում են կարծես եւրօպական քաղաքականութիւնից ու սրա մեքենայութիւններից բոլորովին անտեղեակ, կարծես Հայաստանի վիճակին անծանօթ, քառասուն-յիսուն տարի մէկ անյայտ աշխարհում ապրած և հիմա մեր աշխարհն իջած՝ մեծ պապի առակներ պատմելով... Մտափախներ, յետադէմներ, երկչոտներ, չեն ուզում տեսնել, որ Հայի ու թիւրքի միջև գոյացած կայ մէկ արիւնալի ու հայ դիակների կոյտերով լի վիճ, առաջ է եկած նրանց միջև մէկ արեան առարկութիւն, արդումէնա, որ պատմականապէս միանգամից ընդ միշտ գատել են այն երկուսին իրարից՝ այլ ևս բոլորովին անհաշտ, թշնամական, անդառնալի կերպով, մինչեւ որ չը փոխեն արմատականապէս կեանքի պայմանները, բոլոր պայմանները:

Աւ սակայն որքան էլ այդ երեւոյթների ծագումը և նրանցից ոմանց տղայական լինելը, միւսների ապականութիւնը, երրորդների հոտածութիւնը, չորրորդների մեռելութիւնը հասկանալի լինեն ընդհանուր աղէտների ու հասարակութեան վըհատութեան միջոցին, ըստ որում այն երեւոյթները բացարձակ ազգային ապացոյցներ են հայերիս բարոյական սնանկութեան, — պէտք է այսպիսի ծանր քաղէներում մանաւանդ լինել համարձակ և արիութիւն ունենալ խոստովանելու, որ այդ երեւոյթներն, այս կամ այն եղանակով, մի խիստ ըէակցիա, հակազդեցութիւն էին յեղափոխական գաղափարի դէմ: Գրանումն էր այդ երեւոյթների ամենաաղէտալի կողմը: Բայց այդ հակազդեցութեան ամենասուր վայրկեանն արդէն անցած պէտք է համարել: Յեղափոխական Գաղափարը դուրս եկաւ այս երկու տարւայ ծանր բովից կրկին իր նախկին վիճութեամբ, նաեւ իսկ աւելի փորձած, աւելի հպարտ, աւելի յուսադրական քան առաջ: Այլ թէ այդ մեծ բարոյական յաղթանակը մենք պարտական ենք հայ ժողովրդային խաւերի զարմանալի տոկունութեան, տանջանքները կրելու յատկութեան և յեղափոխական Գաղափարով համակաւծ նրա զգացումների թարմութեան ու

կենսունակութեան, Արեւմտեան սքանչելի ապրա-
տամբութիւնն իր պանծալի կարմիր դրօշակով և
Յունաստանի բռնած ընթացքն ու եւրօպական
տէրութիւնների վատութեան շնորհով կրած ներ-
կայ տանջանքներն՝ իրանց բաժինն ունեցան: «Արանք
յոյս ու եռանդ ներշնչեցին Հայերի մէջ, սրանց վա-
տահութիւնն աւին յեղափոխական Վաղափարի մե-
ծութեան ու պատմական անհրաժեշտութեան նը-
կատմամբ՝ մի կողմից և միւս կողմից ապացուցե-
ցին, որ Հայութեան կրած աղէտները յեղափո-
խական Վաղափարից չեն առաջացած, այլ եւ-
րօպական պետութիւնների այն ստոր ինտրիգներից
ու մեքենայութիւններից, որոնց տակ ընկճեցան
— շատ կարճ ժամանակի համար, սակայն — ան-
պաշտպան Հայութեան հետ միասին՝ նաև նոյն
խիւ պաշտպանւած ու լաւ դիմւած քաջարի Ար-
քադէն, նաև մէկ ամբողջ տէրութիւն կազմող, դը-
րամական ու բարոյական մեծամեծ ոյժերի տէր
Յունաստանը:

Այսպէս, ապացուցւում է, որ յեղափոխական
Վաղափարը վերջնական կերպով յաղթանակել
ու տիրապետել է Հայոց մտքերին, արմատ ձգել
նրա սրտում, մինչև որ նա կատարէ իր պատմա-
կան դերը: Եւ այլ ևս ոչ թնդանօթները և ոչ
կոտորածները չեն կարող դուրս պոկել Հայի սըր-
տից յեղափոխական Վաղափարը, որը զարծել է
նրա միսը, նրա արիւնը, նրա մտածելու ու զգալու
միակ եղանակը:

ՆԱՄԱԿՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԻՅ.

20րդ-Մարգուան 1897, Ապրիլ 1.

Երեք շաբաթ առաջ Ատանայի կուսակալը 20րդ-
Մարգուանի Տէր Սահակ անուն քահանային հեռագրաւ
իր մօտ հրաւիրեց «պազը միւղաբէրէլէր իշխն» (ինչ ինչ
խորհրդակցութիւններու համար)... Առաջին տեսու-
թեան կուսակալի պատուէրը եղած է ստոր՝ «Ատանա
սպասէ, երբ պէտք լինիս կը հրաւիրենք քեզ»: Եւ
ահա 20 օրերէ ի վեր է Տէր Սահակը բոլորովին անծա-
նօթ նկատուամբերով կ'սպասէ Ատանա: Տեղիս ժողո-
վուրդը սկսաւ տարակուսիլ թէ կառավարութիւնը, իւր
սովորութեան համեմատ, անշուշտ բռնութեան տակ մը-
տադիր է գոհունակութեան գիր մը առնել ի վնաս
հասարակութեան:

14-15 օրեր առաջ Ատանայէն և Ճէպէլէն 20րդ
-Մարգուան հասան մի թահրիրաթ միւստիքի և
երկու հազարապետ, բազմաթիւ այլ ղեկավարներով
և ղեկավարներով: Տարածախնութիւններէ և մի քանի ղեկ-
ւարականների խօսքերէն իմացուեցաւ թէ կառավարու-
թիւնը գիւղի մէջ յեղափոխականներ փնտռելու պատ-
րուակաւ տները պիտի խուզարկէ և պիտի գրաւէ գիւ-
ղացիներու գէնքերը: 20րդ-Մարգուանցիք անցեալը աչ-
քի առաջ ունենալով և լաւ ուսումնասիրած լինելով
թուրք կառավարութեան խարդախութիւնները և ինդ-
րիգները, պատրաստեցին մի տեղեկագիր և ուղար-

կեցին հիւպատոսներու թէ՛ յիրենք ոչ թուրք խու-
ժանի, ոչ կառավարութեան վրայ երբէք վստահու-
թիւն չունենալով չեն կարող իրենց գէնքերը յանձ-
նել և ոչխարի պէս մորթուիլ, ուստի այժմէն կը յայ-
տարարեն որ՝ եթէ թուրք կառավարութեան կողմէ մի
այդպիսի քայլ առնուի ստիպուած են յանուն իրենց
կեանքի և յանուն իրենց պատուի դիմադրել և փո-
խանակ ոչխարի պէս մորթուելու մարդու պէս կռուել,
մեռցնել ու մեռնիլ, և այս առթիւ տեղի ունենալիք
խռովութեանց պատճառը և պատասխանատուութիւնը
միմիայն թուրք կառավարութեան վրայ ծանրանալը
նախապէս կը յայտարարենք:

Մարտ 11-ին 20րդ-Մարգուանի նախկին քարոզի-
չը, որ անցեալ տարի իբր յեղափոխական ձերբակալ-
ուած էր և ղրկուած էր Հալէպի բանտը, բոլորովին
անյայտ պատճառով ձերբակալուեցաւ. նոյն օրը դարձ-
եալ անյայտ պատճառով ձերբակալուեցաւ նաև բո-
ղոքակաց նորեկ պատուելին, և երկու օր փայտի բան-
տը մնալէ վերջ առանց որ և է հարցաքննութեան ա-
զատ արձակուեցան:

Մարտ 13-ին Ատանայէն 20րդ-Մարգուան գնացին
կուսակալի փոխանորդը 5-6 պաշտօնեաներու ընկերակ-
ցութեամբ, որոնց թւէն է Ատանայի քաղաքական
ժողովոյ անդամ հայ-պապական թէրճէնեան... Էֆէն-
տին: Այս օրեր դարձեալ Ատանայէն և Ճէպէլէն հա-
սան 500 ղեկավարներ և 35-է աւելի ղեկավարականներ.
սոցա համախմբուելուն պատճառը բոլորովին գողտնիք
կը մնայ. ըստ ոմանց կը կարծուի թէ ըէտիֆները
հաւաքելու եկած են, ըստ ոմանց բարենորոգումներ
մտցնելու, բայց ճշգրտութիւնը այն է որ, թէ ըէտիֆ-
ները պիտի հաւաքեն և թէ «Բարենորոգում» կոչ-
ուած աչքակապութեամբ հայ ժողովուրդը պիտի քնա-
ցընեն մի յայտնի ժամանակ, որպէսզի մի գեղեցիկ օր
մարտելու պատեհութիւն ունենան:

Ըէտիֆները խիստ յապճեպով սկսած են հաւա-
քել: Շրջակայ թուրք գիւղացիները՝ մասնաւորապէս
Էօզէրլիցիք, Գուլլըճըլլիցիք, մերժած են զօրք տալ,
առարկելով թէ՛ «քանի որ 20րդ-Մարգուանցիները ի-
րենց տեղերը կը մնան, քանի որ նոցա գէնքերը չեն
հաւաքուած մենք չենք կարող զօրք տալ և մեր կեան-
քը, պատիւը ու ինչքը կեաւորի ձեռք թողուլ»:

Վարձեալ նոյն գիւղացիները Հաճի Միւսթիֆի
նախաձեռնութեամբ հեռագրած են Պոլիս թէ՛ «մեր
կանանց մէկ քղանցքը մեր ձեռքն է, իսկ միւսը կեա-
ւորներու. մենք ինչպէս կարող ենք զօրք տալ»:

Բարենորոգիչներու առաջին գործն եղաւ հրաւի-
րել տեղոյս աղաները և առաջառկել. «ձեր մէջ գըտ-
նուող պանդուխդները յանձնեցէք կառավարութեան,
նօրա ձեր մէջ մնալով գողութիւններ կընեն, խռովու-
թիւններ կը յարուցանեն և նոցա երեսէն դուրս կը
վնասուիք. մի վախճաք, կառավարութիւնը նոցա որ և է
վնաս չը հասցնեն բանտարկելով և այլն, այլ նօրա
ուղղակի իրենց հայրենիքը պիտի ուղարկէ և դուք,
յանձնելով այդ պանդուխտները, ձեր դէպ կառավա-
րութիւն ունեցած հաւատարմութիւնը ցոյց տուած կը
լինիք...»: Մինչդեռ կառավարութիւնը լաւ գիտէ թէ
20րդ-Մարգուանի մէջ ոչ պանդուխտ կը գտնուի և ոչ
ալ խռովարարներ...

Գիւղացիներու կողմէ դիմումներ եղան Բարենո-
րոգիչներու թէ՛ «մենք բոլորովին մերկ և նօթի ենք,
մեր արտերը բռնի գրաւուած և կը սնկուեն թուրք

գիւղացիներու կողմէ, մենք չենք կարող գիւղէն դուրս գալ և ապրուստի միջոց մը գտնել, մէկ կողմէ խուժանը կը զարնէ, կը վերաւորէ և կը կողոպտէ, իսկ միւս կողմէ կառավարութիւնը կը ձերբակալէ, կը կեղեքէ և կը բանտարկէ... Ինչ պէտք է ընենք մենք կամ ինչ պիտի լինի մեր վիճակը... Բարենորոգիչներէն ոմանք կը պատասխանեն. «հաճաքարունը եկաւ, խոտերը կաճին, ծաղիկները կը բացուին... ձեր անասունները կուտնեն կը պարարտանան և դուք ալ լաւ կապրիք»: Ոմանք խորհուրդ կուտան ըսելով. «դուք նարինջներ, շաա ունէք, պարտէզները լաւ փորեցէք, քարերը մաքրեցէք և աղբեցէք, յաջորդ սուրին առատ նարինջ կ'արտադրէ և լաւ կ'ապրէք»: Իսկ այլք խորհուրդ կ'ուտան թէ՛ «ձեր արտերը (որ այժմ չունենք) երկու անգամ հերկեցէք որպէսզի յաջորդ տարին առատ հունձ արտադրէ և լաւ ապրիք»: Իսկ ոմանք ալ կը պատասխանեն. «Ինչ կուզէք որ ընենք, տարեկան միայն սուրբ մը կուտայիք, հաճաք մեր վեհափառ սուլթանը այն ալ շնորհեց ձեզ...»

Յիշեալ բարենորոգիչները տեղի աղաներից մասնախումբ մը ընտրած էին, վերջիններս դաշտ գնալով պիտի քննէին թուրքերու կողմէ գրաւուած արտերը և հատուցում պիտի պահանջէին. հետեւութիւնը — հետեւութիւնը անարգութիւն և հալածութիւն եղաւ. բարենորոգիչները դարձեալ անտեսեցին:

Բ... գիւղէն հազիւ 10-ը վարկեան հեռի մի հոյու գրաստը օրը ցերեկով բռնի յափշտակուեցաւ, վերջինս բողբոջ. բարենորոգիչները մարդ ուղարկեցին, գրաստը բերեւէ վերջ, հային սպառնացան ըսելով թէ՛ «կեանքուր, գրաստը կը փախցնես, չես կարող բռնել և դեռ կը յանգգնիս իսլամը զոպարտել թէ բռնի յափշտակեց...»: Գրաստի տէրը շատ բարեբաղդ է որ գոնէ իր գրաստը վերադարձուեցաւ: Մէկ կողմէ աւտի և մերկ զինւորները բացարձակ կերպով կը կողոպտեն և կը գողանան, իսկ կառավարութիւնը միւս կողմէ զօրք կը տեղաւորէ 200-Մարզուան չորս կողմէն՝ բարենորոգում մտցնելու համար, իբր թէ «բարենորոգում» ասելով զինւորները շատցնել նշանակէր:

Ներկայ ամսոյս 16-ի գիշերը թուրք զինւորները սափրիչ՝ Մաճաւեան Մկրտիչի խանութը բացին և բոլորովին դատարկեցին յիշեալ. խանութպանի կողմէ բողբոջեցաւ սակայն դարձեալ անխելի մնաց:

Ահա վեղարաւոր Օրմանեան Արջի և մեծ մարդասպանի բարենորոգումներ կոչած օրինազուլութիւնները:

ՄԱՍՍԱՆՅԻ.

Յ. Գ. 200-Մարզուան հասան Մէրսինի անգլ. հիւպատոսը և երկու մարտանաւ, կը կարծուի թէ տրւած վերջին տեղակազրի առթիւ գնացած են:

ՆՈՅՆ.

200-Մարզուան, 3-15 Ապրիլ, 1897.

Ատանայէն Կուսակալի փոխանորդին (Մուսալին) մի քանի պաշտօնեաներով՝ բազմաթիւ զօրքով և զինւորականներով՝ աստ հասնելը և նոցա առաջին ձեռնարկը — բարենորոգումներու(?) մի քանի փոքր նմուշներ — արդէն նախորդ նամակաւ տեղեկագրած էի:

Մարտ 21-ին գիշերը փօլիս քէլ Սիւլէյմանը՝ 15 զինւորներով պահակ շրջած պահուն, յանկարծ հրդարէն մը պայթեցնելով՝ կ'սկսի խուզարկել շրջակայ տու-

ները, «էշխիւնը վար... Սիւլհ փաթլատը» ըսելով, նոյն թաղի մի քանի տներ կը խուզարկէ: Հասներն ալ չեն ձգեր որ խուզարկէ, ըսելով՝ «քանի որ գիւղապետը ձեր հետ չէ, մենք չենք կարող գիշեր ժամանակ ձեզ դուռ բանալ...»: Եւ հաճախ խուզարկութեանց միջոցին՝ Ամիրեկի տղայ Փանոսի տնէն իրենք, փօլիսը և զօրքերը, բացարձակ կերպով կը յափշտակեն (մի զարմանաք, ընթերցող) երկու պղնձե պնակներ «մեզ պէտք է ըսելով»:

Նոյն օրը շուկայի մէջ յանկարծ ձերբակալեցին, զալալի վասիլի 14-15 տարեկան պատանին և միաժամանակ խուզարկեցին յիշեալի տունը, տան մէջ ունէն չը կարողանալով գտնել, բացի մի ասորականէ և մի պարսկ փանիշտանոցէ՝ որոնք անմիջապէս գրաւուեցան կառավարութեան կողմէն: Յիշեալի ձերբակալուելուն պատճառը այն էր որ նա Մարաշ նամակ գրած և քնարի լար ուղած էր. կառավարութիւնը քրնարի լարին տարբեր իմաստներ տալով՝ այդ 14-15 տարեկան պատանին շղթայակապ և յետիոտն Մարաշ ուղարկեց: Նոյն օր առանց որ և է պատճառի ձերբակալուեցան նաև Տօթէօր Մովսէս և քնարահար կոյր Առաքել անուն անձնաւորութիւնները: Մարտ 22-ին՝ Ալէք անտէթ գացող 40-ի մօտ ջորէպաններ և երկրագործներ՝ կէս ճանապարհին ձերբակալուելով, շրջափակապ առաջնորդվեցան դէպի Փանասի բանտ. վերջիններս երեք օր վերջ հազիւ կարողացան երաշխաւորութեամբ բանտէն դուրս գալ: Ալէքսանտրէթ (5 ժամ հեռի) գնալ-գալու համար կառավարութիւնը անցադիր և 22 ու կէս դճկ. անցագրի ծախս կը պահանջէ, մինչդեռ ջորէպանները Ալէքսանտրէթ գրնալ-գալով՝ երկու օրուան փոխարէն 9 դճկ. վարձք կստանան, մինչդեռ գիւղացին իւր ամենափոքր պիտոյքին համար ստիպուած է Ալէքսանդրէթ գնալ, ինչպէս պիտի վճարէ առաջին գնալուն 22 ու կէս դճկ. և երկրորդին ու երրորդին 2 դճկ. (ողջ գրամ), աստ և երկու Ալէքսանդրէթ գալու էի ծախք: Գարձեալ Մարտ 22-ին՝ մի քանի պաշտօնեաներ, սպայներ, փօլիսներ և 30-ի չափ զինւորներ, գիւղապետը իրենց հետ առած, յանկարծ պաշարեցին և սկսան խուզարկել թղիկեան Պողոսի ու եղբօրը տները, սակայն բոլորովին ձեռնունայն վերադարձան, նոյն գիշերը և հետեւեալ առաւօտ, նոյն տները կրկին և կրկին խուզարկեցին, սակայն կրկին և կրկին ձեռնունայն վերադարձան:

Մարտ 24-ին Փանասի մէջ կառավարութեան պալատի մօտ, մի քանի թուրք էշխիւնէր յարձակելով՝ 200-Մարզուանցի Մանասէի վրայ, սաստիկ ծեծելէ վերջ վրան գտնուած դրամները և այլն կը կողոպտեն և կը հեռանան. կառավարութիւնը դարձեալ խլացաւ և կուրացաւ: Գարձեալ նոյն օրերը 200-Մարզուանցի հաճիի տղայ Յարութիւնը երկրագործութեան համար Տօլուգ կը գնայ. ամեն տեղացի թուրքերը վրան յարձակելով՝ զինքը սաստիկ կը ծեծեն և ձին ալ մի քանի դաշունի հարուածներով վերաւորելէ վերջ կը հեռանան, և այլն, և այլն:

Մարտ 20-ին աստ հասաւ Մէրսինի Անգլիական հիւպատոսը՝ երկու մարտանաւերով՝ և 200-Մարզուանի Էօզերլիի ու Օճագլիի խեղճերուն 300-350 անգ. ոսկրի մօտ գրամ բաշխելէ վերջ մեկնեցաւ: Յիշեալի մեկնած օրը Էօզերլիցի թուրքերը նոյն գիւղի հայերու վրայ յարձակելով սաստիկ կը ծեծեն ըսելով «կեանքուր, այժմ հասկացանք որ դուք Անգլիայի հպա-

տակ էք եղած... Գօնսօլը եկաւ ձեր ամսականները վճարեց ու գնաց: Հազիւ Գօնսօլը մեկնած, այսինքն նոյն ամսի 29-ին, Էօզէրլիցի Գասպար անուն աղքատը իր զօքանչի հետ դաշտ գնալով մի քիչ բանջար կը հաւաքէ. վերադառնալու ատեն 2 ալլը կը հանդիպի և երկու քաշ պանիր կը գնէ. սակայն դեռ գիւղէն դուրս չեկած՝ նոյն գիւղի թուրքերը սոցա վերայ յարձակելով թէ Գասպարը և թէ կինը սաստիկ ծեծեցէ, բանջարն և պանիրը յափշտակելէ վերջ՝ «Կեւ-վուրներ դուք կը կարծէք թէ Գօնսօլի տուած ի հանէն դուք պիտի ուտեք» ըսելով կը ձգեն: Այս առ-թիւ դարձեալ բողոքուեցաւ, դարձեալ անլսելի մնաց: Այդ ալ ձեզ նիւթական օգնութիւն հասցնելու հըրաշալիքներէն օրինակ:

Բարենորոգիչ Մուսավինը արդէն իր գերը կատարեց, բարենորոգումներ երբէք չընելով և բըւնութիւնն ու ճնշումն կրկնապատկելով: Սոյն աւազակապաշտօնեան այժմ աղաներէն շնորհակալութեան և աստիճան պէր քէմալի թուղթեր կը պահանջէ... Մի քանի համարձակասումներ, ներկայանալով Բարենորոգիչ Մուսավինի՝ կը պատասխանեն. «Փաշա էֆէն-տի, ինչ բարենորոգում ըրիր որ շնորհակալութեան թուղթ կը պահանջես... Ի՞նչ բանի համար շնորհակալ ենք ըսելով թուղթ պիտի տանք. մենք չենք կարող դուրս ելնել և դործու ձեռնարկել... մեզ կը ծեծեն, կը կողպտեն, կը վերաւորեն, կը սպանեն՝ թուրքերը. մեր տները կը թալանեն, կ'այրեն, կ'աւերեն՝ թուրքերը, մեր պարտէզները կը կոտորեն, մեր արտե-րը գրաւուած են և առանց վարձքի կը վարեն, կը ցանեն, կը քաղեն՝ դարձեալ թուրքերը. մենք կը բողոքենք, կ'ուլանք, կ'աղաղակենք, երբէք չէք լսեր... այս է աստիճան պէր քէմալը, այս է Բարենորոգումը: Եթէ այս է, չենք ուզեր, ետ առէք. մեզ համար Բարենորոգումը աւելի լաւ է քան այս տեսակ Բարենորոգումը»: Իսկ այդ պաշտ պօզուգ կառավարութեան լիտի պաշտօնեան՝ մեր համարձակասումներէն երիցագոյնին տարիքը հարցնելէ վերջ՝ առանց ամաչելու կը պատասխանէ. «Դու 75 տարի ապրած ես, լաւ գիտես, այսպիսի դէպքեր միթէ միայն հիմա է որ կը պատահին, չէ որ առաջ ալ կար և թերեւս ասկէ աւելի... Դորա անցած գացած են... ասկէ վերջ արդէն լաւ կը լինի, հոգ մի ընէք...» Ահա մեծ ոճրագործի այս հարազատ լակոտի սքանչելի բարենորոգումները: «անցեալ դէպքերը անցած են», գալիքն ալ՝ արդէն կանցնէ և հետզհետէ ալ ճնշումը, բռնութիւնը, նեղութիւնը և թշուառութիւնը աւելի ու աւելի կը ծանրանան խեղճ հայի վրայ՝ և դարձեալ «ապահովութիւն կը տիրէ», կըսեն, դարձեալ շնորհակալութեան թուղթ կը պահանջեն:

Սուլթանական սոյն լիտի պաշտօնեան նախ փորձեց աղաների տները մէկիկ-մէկիկ այցելելով՝ Օսմանցիի յատուկ շողորթութեամբ համոզելով վերջիններուն կնքել տալ այդ գրութիւնը, բայց այդ կերպով չը աջողուելով՝ Պալեան Զովհաննէս էֆ. կոչուած վատի խորհրդով և գործակցութեամբ աղաները և կղերականները մի սենեակ հրաւիրեց: Վերջիններէն մէկ մասը՝ գուշակելով լինելիք ստոր խաղը մերժեցին գնալ, և միայն մի քանի թուլասիրտ և վհահերոտ աղաներ, ինչպէս նաև նապաստակէ մը աւելի թող ու երկչոտ մի կղեր կը գնան որոշեալ սենեակը: Մուսավինը նախ մի քանի փոխներսով և զօրքերով

սենեակի անցքը փակել տալով՝ կստիպէ և բռնութեան տակ ստորագրել կուտայ այդ ապականեալ թղթ-թի կտորը: Ճիւղ սուլթանի սոյն սրիկայ պաշտօնեան այժմ սկսած է չը ստորագրող աղաներին և կղերներին մէկիկ-մէկիկ ստիպել և սպանալիքներ կարգալ, որ ստորագրեն: Ահա բարենորոգումը լրացաւ...

ՄԱՍՏԱՐՅԻ.

29-Մարգուան, 23 Ապրիլ 1897

Թուրք կառավարութիւնը յայտնի դիտումներով միշտ կը գրգռէ մոլեռանդ խուժանը հայերուն դէմ, իբր թէ արտասահման գտնուող հայ գաղթականներէն 12,000 կամաւորներ Յոյների բանակին միացած են. սոյն և սոյնանման տարաձայնութիւններ առիթ տուած են մոլեռանդ խուժանին ծեծել, կողոպտել և սպանել հայերին: Աւագ Շաբաթ կէսօրին Օճագլըցի Տէլի Բէշլիեան Արրահամը 22 տարեկան, գիւղէն քիչ հեռու խոտ քաղած պահուն յանկարծ մի քանի թուրքեր վրան յարձակեցան և առանց պատճառի հրացանի երկու հարուածով գետին փռեցին, խեղճ զոհի դիակը մինչև իսկ կտոր-կտոր ըրին: Կառավարութեան բողոքուեցաւ. 24 ժամ դիակը անթաղ մնալէ վերջ բարհաճեցաւ փոխադրել 2 որս ճանապարհ և «բըն-նութեան» ենթարկել: Ոճրագործներուն թիւրք լինելը կառավարութիւնը գիտնալով հանդերձ, փոխանակ ոճրագործները ձերբակալելու, ձերբակալեց մի քանի հայեր և բանտարկեց, ոստիկանները ձերբակալուած հայերէն երկուսին բռնի մերկացնելով, կը տանեն հագուստներուն վրայ հաւի արիւն սրսկելով կը բերեն կը հագուեցունեն. խեղճ հայերը կուլան կը պոռան բանտին մէջ այդ խարդախութեան մասին, սակայն ոչ ոք չուզեր լսել:

Ասոր հետ միասին այդ վայրենի կառավարութիւնը Զատիկի տօնի առթիւ զօրք կուղարկէ և եկեղեցին կը պաշարէ, «պաշտպանութեան» անունով. մինչդեռ անդին տեղի ունեցած անկարգութիւնները, աւազակութիւնները և սպաննութիւններն բողոքովին կ'անտեսէ և տեսածն ալ հայերուն կը վերագրէ:

Եւաճարը գիւղին մէջ իբր թէ պահպանութեան համար դրուած զօրքերու զօրապետը յիշեալ գիւղացիներէն բացարձակապէս երկու հայ աղջիկներ կը պահանջէ և կըսպանայ ըսելով. «մինչև այդ երկու աղջիկները չառնեմ, չեմ հեռանար, և ձեր գլխին չի լսուած և չը տեսնուած չարիք պիտի թափեմ»:

Շէպէլ Պէրէքցի հայ ոստիկան մը կառավարութեան կողմէ պաշտօնով Փայաս կը ղրկուի. ճանապարհին Էրզինէն անցած ժամանակ նոյն գիւղի թիւրքերը վրան յարձակելով սաստիկ կը ծեծեն ըսելով, «կեւվուրտան զապիթայ մը օլուր, իսլամըդ պաթիթ մը զան էտիեօրսընըդ»: Եւ այս օրինակ դէպքերն աւելն օր ու բազմաթիւ են:

ՄԱՍՏԱՆՈՑԻ.

ՆԱՄԱԿԱՊԵՐՍՈՒՄՆԵՐԻՑ

Թավրիզ, Ապրիլ 1897.

Թավրիզի ռուսական հիւպատոսարանի հասարակ ծառայողներից պարսկահայտակ մի հայ իւր տան դռնան առաջ կանաչավաճառի հետ սակարկում է և

զարմանալով վաճառողի առաջարկած թանգ արժեքի վրայ՝ պատասխանում է նրան, թե այդ արժեքով կարող է գեղին իւղ ուտել՝ փոխանակ դառնահամ «իւլ-նըլ»-ի: Իւր աղախնի հետ անցնող մի պարսիկ տիկին, որ նոյն այդ հիւպատոսարանը յաճախող մօլլալի աղջիկն է լինում, մօտենում է հայ ծառայողին և նրան հայհոյում՝ կանաչավաճառին իզուր տեղը նեղացնելու պատճառով: Փոխադարձ հայհոյանքներից յետոյ պարսկուհին ճշում է բարձր ձայնով՝ «Հայը կամենում է ինձ բռնաբարել» ու մտնում հայի տունը, ծեծում նրա կնոջը... Հայ թաղերի վերայ յարձակելու առիթ որոնող քաղցած ամբոխը խռնում է տան առաջ և մի քանի բուլեից յետոյ՝ փոխանակ այդ տան — թալանում է վեց այլ տներ, որոնք հեռու են լինում առաջինց միջանկեալ տանեակ տների տարածութեամբ: Մինչդեռ թալանում են վեց տները և մի քանի անձինք կողոպտում ու ծեծում թաղերի մէջ, կիսաբաց խանութներն էլ իսկոյն փակում են և տուն շտապող եւրօպացիները և հայերը սոսկալի հարուածների ենթարկւում: Քարանսարաններում փակւած հայերը ոստիկանների հսկողութեամբ տուն են հասնում՝ անգլիական հիւպատոս Պ. Վուտի պահանջմամբ և կայսերական բանկի դիրեկտորի աշխատանքով, որն այնքան բարի գտնւեց, որ պատերեց հայ և պարսիկ բանկային ծառայողներին ոչ մի դիպւածում չբաժանել միւս հայերից. այդպէս էլ եղաւ: Թուրք ամբոխի կատաղի գոռում-գոչիւնների հետ դադարեց և հայ գոռների, գանգների, տների ջարդելը ու մասնակի կողոպտումները հայ թաղերի մէջ: Գէպ-քէն սկսեց Մարտ 19-ին, հինգշաբթի օրը երեկոյան ժամը 3-ին և վերջացաւ այդ օրը մթութեան մէջ:

Գէպից անմիջապէս յետոյ պարսիկ կառավարութիւնը, ի նախատինս տաճկական պետութեան, ոստիկանական և զինւորական խիստ պաշտպանութեան տակ է առնում երկու հայ թաղերն էլ՝ յարձակող ամբոխը գնդակահարելու հրամանով: Խաղաղ է անցնում առաջին գիշերը, ուրբաթ օրը տեղի են ունենում կրկին մասնակի կողոպուտներ և ծեծեր խուճախումը անցնող թուրք սրիկաների ձեռքով:

Հարուսակում են բանակցութիւններ հիւպատոսների, հայ և թուրք հոգեւորականութեան ու պարսիկ կառավարութեան և թագաժառանգի միջև: Վերջինը և թուրք հոգեւորականութիւնը պահանջում են ռուսաց հիւպատոսից յանձնել թագաժառանգին օրւայ հերոս Յովհաննէսին, որպէսզի կարելի լինի խաղաղեցնել խուճախը, որը մասերի բաժանւելով՝ ժողովներ է անում մզկիթների մէջ և առաջարկում «կամ հայ տղան և կամ ամբողջ հայերի կոտորած...» Պարզ բան է, որ Պէտրովը խիստ յամառութեամբ մերժում է աղան յանձնելը՝ շնայած որ ստանում է նրան չ'միասնելու խոստում կառավարութեան կողմից. մերժում է, որպէսզի, ինչպէս ոմանք կարծում են, իւր սարքած խաղը լաւ հետեւանք ունենայ: 1000-ի չափ հայ կանայք և երախտներ զանազան թելադրութիւններով դիմում են ռուսական հիւպատոսարանը, ուր ստիպում են մնալ 5-6 օր, չնայելով որ բարեկարգութիւնը բոլորովին վերահաստատվել էր և թագաժառանգը հիւպատոսարանից պահանջում էր դուրս հանել այնտեղ ապաստանւածներին: Առ հասարակ կարծում են թէ Թաւրիզի այս գէպը ռուսական հիւպատոս Պէտրովի սարքած մի խաղն էր, որ այս տեսակ խառնակութիւններով կամ մի

կոտորածով ռուսական միջամտութիւն յառաջ բերել Ատրպատականում. սակայն փորձը անյաջող ելք ունեցաւ:

Խ Ր Օ Ն Ի Կ Օ Ն

Մ Ե Ն Բ Զ Ե Ն Բ Հ Ի Ա Ս Թ Ա Փ Ի Ո Ւ Մ.

Ո՛րքան տխուր երևոյթներ մեր կեսնքում: Ո՛րքան ճշմարտութիւններ, որոնք չէ հասկանում, կամ չէ կարողանում հասկանալ հայ հասարակութիւնը՝ շշմկած, շփոթված ազգային հարւածներից և մի կարգ գործիչ կոչւած դաւաճանների ու շառլատանների վարպետաբար լարած մեքենայութիւններից, որոնց շնորհով պղտորեցնում են ու աւելի շփոթում, նաև վհատեցնում հասարակութեան թոյլ, միամիտ ու անհասկացող մասի մարերը: Եւ որքան նպաստում են այդ սե գործին եւրօպական քաղաքականութեան ու մեր ազգային դատի ներկայ շփոթ հանգամանքները...

Մարդկութեան անջնջելի նախատինքի ներկայ անպատւաբար և սոսկալի թւականը — ներկւած հարկւր հազարաւոր անմեղ հայերի, մակեդոնացիների, կրետացիների և դրանց վիճակակիցների համիտական ձեռքով կատաղաբար թափւած արեան տաք-տաք շիթերով, անմահացած հոկայ բուրգերով — մարդկային դիակների, գանգերի մեծ ու փոքր, բայց աճեցող կոյտերով, զարդարւած այդ շիթերը և կոյտերը իբր թէ ծածկող զանազանագոյն կախտուած փալամներով — բէֆօրմների ծաղրածւական ծրագիրներով և պսակած երկար ժամանակ խնկարկող «մեծ գործի» — եւրօպական մարդասիրական համաձայնութեան հետեւանք ու քաղաքականութեան պտուղ համարող ուժային ձեւով ու որոտումով՝ կրետական արիւնակաթ երկնքի տակ — այո՛, այդ թւականը, նախատինքի այդ ժամանակը, լինելով իրերի նախկին գրութեան հարազատ և անխուսափելի հետեւանքը, գալիս է հաստատելու մի ճշմարտութիւն, որը երէկ չէր ընդունւում և մինչև իսկ ամենակատաղի կերպով հարւածւում էր աշխարհայ հիտս թափւած՝ շփոթ, անկարգ ու անբովանդակ կարծիքների տէր «ազգասէրների, հայրենասէրների» և «մարդասիրութեան» հաւատացեալների կողմից՝ ընդդէմ Հնչակեան գաղափարի, որը միշտ հիմունք է ընդունում, հակառակ սովորական փրօւն, իմաստակ թութակային բառակուտակութեան, պատմական քննադատող հայեացքը և հայկական իրականութիւնն իր ներկայ պատմական շրջանում:

Հաւատքը՝ առաջացած քրիստոնեայ ազգասէրների, հայրենասէրների և մարդասիրական գաղափարի անսկզբունք մօլինների մէջ դէպի քրիստոնեայ տեւրութիւնները՝ տաճած համակրօնակցութեա՝ նախապաշարւած և անտեղի համակրութեան զգացմունքից, յոյսը՝ փայփայւած առաջինների սրտում՝ դէպի այդ մի կնոյն վեց մեծերի շրջուցից քաղաքականութիւնը, նրանցից ակնկալած ազատութեան փշրանքներից, — այսօր այդ բոլորը ջախջախւում է «քաղաքակիրթների» արձակած ռուսների հարւածների տակ և մի մասը Միջերկրականի անդունդն է խորացուցւում, իսկ մնացածը՝ վառօդային ծխի հետ ցնդում մթնոլորտի այն խաւերի մէջ, ուր նա փայփայել, շուրջ էր տարիներ առաջ... Եւ օգային ամբողջների կարուցանողներն այսօր գըտնւելով անհուն դատարկութեան մէջ, դատարկութիւն

զգացման, մտքի, գաղափարի, մի և նոյն ժամանակ ուշաբերելով եւրօպական «հրեշտակներին» առաջնեւրում հասցրած բաժնակաթիւնային անզգալի հարեւանների աշխարհայ կարծեցնող ազդեցութիւնը՝ հիասթափուում են, ապուշ կտրում, շշմում և իբրեւ մօմիա սառած ու կանգնած մնում... անհուն դատարկ տարածութեան մէջ չուած աչքերով բոլորովին իզուր տեղը որոնելով մի ինչ որ իրական օգուտ...

Վարուժիւնը ծանր և ճնշող է: Սակայն նրա ծանրութեան և ճնշման վճատեցուցիչ ազդեցութիւնը պէտք է վերագրել այդ մարդկանց գաղափարային աղքատութեան և նրանց նախկին չափազանց հիացմունքին, որ այսօր սթափուում է առաջացնում:

Շշմում, սառում, ապուշ կտրում և վերջապէս հիասթափում են նրանք ներկայ սոսկալի իրականութեան առաջ, որովհետեւ երբ նրանց ասում էին որ «ամենամեծ արհաւիրքները դեռ ապագայումն են լինելու», որ «ի՞նչը միայն սկսած է և այժմ է, և այսուհետեւ է, որ պէտք է ցոյց տալ զաղափարի ոյժը և բարոյական յարատեւութիւն», այդ ճշմարտութիւնները չէին ուզում հասկանալ և ընդունել... և այսօր հիասթափութեան մէջ՝ իրանց տեսնում են մերկացած, թուլացած ու անկած բարոյապէս, մտաւորապէս: Նրանք չէին ուզում հասկանալ և ընդունել, որ ազգային պատմական ձգնաժամին կարող է լինել միայն մէկ ուղղութիւն, մի ճշմարտութիւն, մի սկզբունք, և ոչ թէ վարանումն, փոփոխամտութիւն, արտի ու մտքի պոռնկութիւն... Չէին ուզում հասկանալ և ընդունել և երեւակայել անգամ, որ տխմար «դիւանագէտ» ինքնակոչների անձնական շահախնդրական դիտումներից առաջացած սոփեստութիւնները յօգուտ «դիւանագիտական գործունէութեան» վեց մեծերի առաջ — սատանան գործունէութիւն համարէ այդ — խաբեբայութիւններ են և որ վեց մեծերն այնքան «ստոր կը գտնվեն», որ նիւթական շահն աչքի առաջ ունենալով՝ ոչ թէ չեն պաշտպանիլ այն թշուառ ազգերին, որոնք արեան նախճիրների միջից աղաղակում են «շունչ ու կեանք», այլ և սուլթանների ձեռքով իրանց թշնմանութիւնը կուղղեն նոյն այն փոքր ազգերի դէմ... Տկարամիտ ու մեծամիտ «դիւանագէտներ» խաբեբայութեան զոհեր են այդ մարդիկը, այդ վճատողները...

— Իսկ այժմ հաւատում էք... Այժմ հաւատում ու համոզում էք, որ եւրօպական դատարան ինդիր — բարեխիղճ՝ կառավարութիւնները փոխանակ շուտ լուծել տալու տանջող ազգերի բորբոքած հարցը՝ առը ջրով հանգցնելու են ձգտում այն — գրօշական հաշիւներով, որոնց համար անսովորաբար կազմում են գայլ-արջ-աղուէսային կոնցերաներ և ծափահարում Մեծ Մարդասպանի սխրագործութիւնները: Այժմ հասկանում էք մեծ դահճապետների գործածած «բրիտանիկութիւն», «մարդասիրութիւն», «բաղադրութիւն» և այլ այդպիսի զէնքերի իսկական ստոր նշանակութիւնը. տեսնում էք այդ փայլուն զէնքերի ներքին ժանգը, որ այսօր թունաւորում է փոքրիկ ապստամբ ազգերի բիւրաւոր վէրքերը, սկզբում լուսաւորելով նրանց մինչև արմատը, և այդ՝ յայտնի նպատակով...

Եւրօպական կառավարութիւնները ներկայ «նախատինքի թաւան» առաջին և երկրորդ աստիճաններում ապացուցին այն ճշմարտութիւնը, թէ ազգային ինքնօգնութեամբ է միայն, որ կարող ենք ազատվել:

Ապացուցին նրանք այդ՝ իրար յաջորդող երկու յայտնի գործողութեամբ — 1) ընթերցանեց ծրագրելու խառնակ խաբեբայութեամբ, որով տանջողներս «որօր» երգեցին, մի կերպ թմրացրին և 2) մեծ մարդասպանին առաջին «չափաւոր» փորձով պաշտպանելու համաձայնութեամբ, որով արեգակի պայծառ լոյսի տակ տեսնեցաւ այն, որ երէկ իրար երեսը թքող բրիտանիայ և մահապաշտութեան թշնամիները այսօր լիզում են իրանց թուրը և գաղտագողի համբուրելուց յետոյ՝ թեւեղուկ պարում են իրանց կեղտոտ ոտներով նահատակների այն սրբագործած գերեզմանների վրայ, որոնց տակ դեռ ևս չի ցամաքել անմեղ զինւորների բողբոջ արիւնը, որ երէկ թափուեցաւ անձրեւի նման... Պարում են այդ — հենց իրանց կողմից — խնկարկած գերեզմանների վրայ ու ալկոլախառն թուրով թունաւորում հանգչողների ոսկորները...

Սակայն մենք չենք հիասթափուում այժմ և չափաի հիասթափութեան այսուհետեւ էլ, երբ եւրօպական մեծ անամոթները ներկայ արիւնաներկ թաւանի երրորդ աստիճանի վրայ անցնելով՝ աւելի աչք ծակող կերպով ցոյց տան իրանց բարոյական ամբողջացած այլանդակութիւնը: Չենք հիասթափուում այժմ և չբախի հիասթափութեան այսուհետեւ էլ, որովհետեւ «դիւանագէտների» և ամեն տեսակ՝ յեղափոխական քողի տակ ծածկող շուռատանների, որպէս նաև հայրենասէրների, ազգասէրների, կիսազգասէրների և «պատուութեան մուրացկանների» նման երբեք չենք հիացել եւրօպական դատարանութեան և համակրօնակցութեան՝ իրականապէս գոյութիւն չունեցող ձրի բարիքների վրայ, ինչպէս և չենք հիանում այժմ:

Միջապան ջրերում տեղի ունեցող եւրօպական համաձայնութեան ցրւելով՝ թէ մենք՝ տանջողներս և թէ նրանք՝ գազան Համիդն ու նրա կողմնակի պաշտպանները, ոտք ենք դնում նախատինքի թաւանի երրորդ աստիճանի շէմքի վրայ: Այդ աստիճանում թէ ինչպէս խաղեր են լինելու սուլթանի կողմից՝ ակներեւ է, ինչպէս պարզ նաև վեց ազգաւների բռնած ընթացքի վախճանը, եթէ մենք չըզործագրենք աւելի և աւելի նիւթական և ֆիզիքական միջոց, քան գործադրել ենք մինչև այժմ:

Հարունականք մեր ճշմարիտ յեղափոխական գործունէութիւնը այնքան եռանդուն և այնքան լուրջ կերպով, որ կարողանանք կրէտացու և յոյնի նման ձեռք բերել անգին ընկերոջ, եւրօպական հասարակութեան գործնական համակրութիւնը, աջակցութիւնը: Իսկ այդ գործնական համակրութիւնը և աջակցութիւնը ձեռք բերելու համար մեզ հարկաւոր է լինել ոչ թէ կրէտացի և յոյն, այլ դրանից էլ աւելի, որովհետեւ մենք բոլորովին տարբեր պայմանների մէջ ենք կուռում մեր անհաշտ թշնամու դէմ, քան թէ նրանք: Եւրօպական հասարակութեան աջակցութիւնը մեզ անհրաժեշտ է: Բայց և անհրաժեշտ է նաև — որպէսզի չըկորցնենք ամեն ինչ — յեղափոխական ասպարէզում ունենալ հայ հարուստների Աւերօվական ոգին, որ չըխնայէ իր ունեցած կարողութիւնը սուրբ դատի աջողութեան համար:

Ամօթ հայ Աւերօվներին, որոնք տեսնում են ամեն մի ժամ թափող և եռացող հայ երիտասարդ արիւնը, որոնք տեսնում են, որ իրանց ազգի փրկութիւնը, նման ուրիշների, միայն արիւնով կարող է լինել, բայց և դարձեալ շտապում են պինդ փակել սնդուկների մէջ

իրանց ոսկիները՝ ստոր, չարհական ժլատութեամբ:

Մենք չենք հիասթափում և յուսահատուում, սակայն ցաւում ենք, որ յարմար օպէսներում աւելի աջողութեամբ կատարող գործի առաջ արգելքներ են ստեղծուում մի կողմից ինքնակոչ հայրենասէր կամ յեղափոխական անուանած շառչատանների ստոր ջանքերով և միւս կողմից մեր հարուստների ամօթալի ու յանցաւոր անտարբերութեամբ:

Ա. — Ա. — Թ.

ՅՈՒՆԱ-ԹԻՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԵՒՐՕՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

— Յունական նախարարութիւնն ընկաւ պաշտօնից Լարիսայի պարտութիւնից յետոյ. Դէլիանիսին յաջորդեց Ռալի:

— Ապրիլ 30-ին Թիւրքերը Վէլէստինոյի երկաթուղին են կտրում, որով Վօլոյի և Ֆարսալայի հաղորդակցութիւնը խզում: Թիւրքերը գրաւել են Կէֆալօն: Կորուստը երկու կողմից մեծ է: Թիւրքերը երկու կէտերից 10,000 հոգով յարձակվել են Վէլէստինոյի վրայ. կռիւն տեւել է մի քանի ժամ, և ետ են մղվել: Վէլէստինոյի կռուում Յոյներից սպանվել են 30 և 140 վիրաւոր. իսկ Թիւրքերից սպանվել 550 հոգի: Թիւրքական զօրքերը Թէսալիայում այրում, թաւանում են քրիստոնեաների ստացուածքները և կողոպտում եկեղեցիները. Լարիսայում սրբապղծել են եկեղեցիները:

— Թիւրքերի մի գունտ յարձակվել է Պէնտիպի-դասի վրայ, որը Կոստանի բանային է, և ետ է մղվել Յոյներից:

Թիւրքերը Ֆարսալայից յետոյ գրաւել են և Վէլէստինօն: Յոյները Ֆարսալայից ապահով փոխադրել են իրանց ռազմամթերքը Դոմօկօ: Թիւրքերը Դիօսքանիում կոտորել են մի յոյն քահանայի իր ընտանիքով:

Մայիսի 1-ին Վէլէստինոյի կռուում Թիւրքերից սպանվել են 1,200 հոգի: Մայիս 1-ին և 2-ին Յոյները Թաղել են 600-700 սպանված Թիւրքեր, 400 ձիեր նոյնպէս սպանված. Յոյներից մեռել են 85 հոգի և 230 վիրաւոր:

— Հաքի փաշայի հրամանատարութեամբ Թիւրքերը գրաւել են Վօլօն: Յոյների բանակը մեկնել է Աթէնք. բնակիչները մնացել իրանց տեղերը:

— Յոյն կառավարութիւնը միջամտութիւն խնդրեց պետութիւններից, խաղաղութիւնը վերահաստատելու համար իր և Թիւրքիայի միջև: Պետութիւնները նախ քան յանձն առնելը պահանջեցին Յոյնից ետ քաշել իր զօրքերը Կրէտէից. Յոյնը իսկոյն կատարեց նրանց պահանջը, բայց դեռ ևս որ և է միջամտութիւն չէ կատարւել և երկու կողմից պատերազմը շարունակվում է:

Տէնդօսի մօտ Յունական մի մարտանաւ գրաւել է մի շոգենաւ, որի մէջ գտնւել են 90 արաբական զինւորներ և վեց սպաներ քաղաքացու հագուստով, բայց զինւորական համազգեստ գտնւած է նրանց գոյքերի մէջ. նաւի մէջ եղել է 300 մարտինի հրացան և 14,000 փամփուշտ:

Հաշտութեան համար Պետութիւնների տւած ծանուցադրին Դոմուր հետեւեալ պայմաններն է առաջարկել. — (1) Թէսալիայի միացումը. (2) Հատուցում տալ միլիան լիրայի, իբրև պատերազմական տուգանք, (3)

Յոյն հպատակների իրաւունքների ջնջումը Թիւրքիայում: — Այդ չափազանց պահանջների դէմ խիստ կերպով բողոքում է եւրոպական մամուլը:

19 Մայիս. — Աթէնքի Արտաքին գործերի նախարարը Պետութիւնների միմիատրոններին յայտնել է, որ եթէ Պետութիւնների կողմից զինադադարի համար միջամտութիւն չը լինի և եթէ Էդհէմ փաշան հրաման չարձակէ պատերազմի դադարման համար, Հէլլենական կառավարութեւնը պիտի շարունակէ պատերազմը նոր պատրաստութիւններով և Թագաւորը անձամբ պիտի կառավարէ բանակը:

Վ. Պօլսոյ Գերմանական Գեսպանը հրահանգ է ստացել միանալ իր Պաշտօնակիցներին, զօրաւոր բողոք տալու համար Դրան: Ցարը նոյնպէս իր կողմից դիմում է արել սուլթանին՝ դադարեցնելու համար պատերազմը: Հրահանգ է ուղարկվել Էդհէմ փաշային դադարեցնել թշնամութիւնները:

Թիւրքերը գրաւել են Դոմօկօն. Յոյների կողմից ընկել են 300 մեռեալ և վիրաւոր. որոնց մէջ և ըսպայներ: Սպանվել է իտալական կամաւորներից Ֆրատտի՝ երեսփոխան Պարլամէնտի և ծանր վիրաւորւել է յայտնի իտալացի սօցիալիստ Ամիկար Զիպրիանի:

Այժմ տեղի ունեն խաղաղութեան պայմանների բանակցութիւնները:

Կ ու ս ա կ ց ու թ ե ա ն ս՝ գանձարանում շնորհակալութեամբ ստացւել են հետեւեալ գումարները. —

Բ Օ Լ Գ Ա Ր Ի Ա. Բուրգասի մասնաճիւղից 30 Փրանսիական ոսկի, հետեւեալ կերպով հանգանակած. — Վասպուրականի խմբից 3 ոսկի, Արծրունեաց խմբից 4 ոսկի, Արարատեան խմբից 3 ոսկի, Վրէժ խմբից՝ 3 ոսկի, Կայծակ խմբից՝ 2 ոսկի, Կազմիր խմբից 2 ոսկի, Բարձր Հայոց խմբից 4 ոսկի, Արսլան խմբից 4 ոսկի, Մամիկոնեան խմբից 2 ոսկի, Բագրատունեան խմբից 2 ոսկի, Փայլակ խմբից 1 ոսկի, և 111 շրշ. սրճարանապետ Աբրահամ Յովհաննէսեանի ձեռքով հաւաքւած:

Զ. — Գ. փոքր խմբից 2 դաղ. ոսկի,

Ռ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա. Բուրէշ քաղաքից, Յ. Տէր-Մարկոսեանից 30 Փր.

Թ. — Իշ. մայր Արաքս խմբակից, Վահան 2 Փր:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ժ Ր Ա Գ Ի Ր

ՀՆԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՆԵԼՆԱԾ՝ ԲԱՅԱՐԱՐԱԿԱՆ ԹՈՂՈՒՄՈՒՆԵՐ.

ԳԻՆԸ 1 ՖՐԱՆԿ.

«Ա Պ Տ Ա Վ»

ԵՐԳԻԹԱԲԱՆԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

(ՄԻԱՄՍԵԱՑ)

«Ապտակը» մայիս ամսին սկսում է իր զոյուլթեան չորրորդ տարեշրջանը: Բաժանորդ գրվել ցանկացողներին խնդրում ենք առանց ուշացնելու դիմել «Ապտակի» խմբագրութեան: «Ապտակի» տարեկան բաժանորդագինն է 5 ֆրանկ:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ

«ՀՆԱԿ»-Ի

ԼՕՆԴՕՆ.